

ՃԱՄԲԱՆ ԼՈՅՍԻ ԵՒ ԱՏՈՒԵՐԻ

Մտտերով, լոյսերով, ըստուերով սա համբէն
Կ'անցնի գոյգն հեռանոյ՞լ երազի մը նրման ...
Կ'անցնի գոյգը անդարձ, մինչ անոնց ետեւէն
Կը հոսի իմ հոգիս մութին մէջ հողմածայն:

Մըտածումս այս գիշեր է վրտա՛կ մը վընիտ,
Ուր կ'իյնան բերք առ բերք ծաղիկները կեանքին,
Ծաղիկներ բիւրեղէ՛. իբր արցունք ու ժըպիտ,
Ու մութին մէջ պըզտիկ լոյսի պէս կը բացուին:

Կը տեսնեմ ես կըրկին հեռաւոր այն տըղան,
Որ հոգւոյն մէջ տեսիլ՛ք ունի հո՛ւր աչքերուն,
Քայլերուն իր ընկեր՛ք քայլն անոյ՞լ աղջըկան,
Շրթներուն՝ տրտմագեղ ու բեղո՛ւն լըռութիւն:

Կը նայիմ ես անոր, ինչպէս ծովն՝ երկինքին,
Ու կարօտը կապոյտ՝ կ'ըլլայ երգ մը տըրտում.
Կը նայիմ ես անոր, ինչպէս մա՛հը՝ կեանքին,
Ու կ'ըլլայ վիշտն իմ մէջ հըրկիզում մ'անդադրում:

Ըլլայի՛ք, ըլլայի՛ք ես կըրկին այն տըղան ...
Ըլլայի՛ր դուն աղջիկն ըսպիտա՛կ հոգիով ...
Քայլերուս քու քայլերդ ըլլային՝ բարեկամ,
Անցնէինք երգեցիկ այս համբէն քովէ քով:

Մոռնայինք մեոցընող առօրեան յիշերիմ,
Տենչերուդ՝ իմ տենչե՛րս ըլլային միշտ սահման,
Անցնէինք ժպտելով այս կեանքէն՝ երազին,
Անցնէինք միասին՝ երազէն ալ մահուան:

ՎԱՀԷ - ՎԱՀԵԱՆ